Eesti Diplomaatide Kool
Estonian School of Diplomacy

Eesti Idapartnerluse Keskus
Estonian Center of Eastern Partnership

Արևելյան գործընկերության էստոնական կենտրոնի / Դիվանագիտության էստոնական դպրոցի 2013-2014 թթ. կրթաթոշակային ծրագիր Հայաստանի համար

2013-2014թթ. ուսումնական տարում Արևելյան գործընկերության էստոնական կենտրոնը (ECEAP)՝ Դիվանագիտության էստոնական դպրոցի (ESD), Էստոնիայի արտաքին գործերի նախարարության և Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) հետ համատեղ կրթաթոշակներ է առաջարկում երիտասարդ հայ դիվանագետների և քաղաքացիական ծառայողների համար՝ մասնակցելու *Միջազգային հարաբերությունների և եվրաինտեգրման* վերապատրաստման ծրագրին, որը տեղի կունենա Տալինում՝ Դիվանագիտության էստոնական դպրոցում (ԴԷՊ), 2013 թվականի սեպտեմբերից մինչև 2014 թվականի մայիս:

Կրեդիտների փոխանցման և հավաքման եվրոպական համակարգով 60 միավոր արժեքով Միջազգային հարաբերությունները և եվրաինտեգրումը մեկնարկում է 2013 թվականի սեպտեմբերի 17-ին և ավարտվում 2014 թվականի մայիսի 31-ին: Հաջող հանդես եկած ուսանողները ստանում են ԴԷՊ-ի դիպլոմ և ուսումնական բնութագիր:

Վերապատրաստման դասընթացը ներառում է երեք թեմատիկ մոդուլ.

- **միջազգային հարաբերություններ,**
- **եվրոպագիտություն,**
- **դիվանագիտություն:**

Դասավանդման լեզուն անգլերենն է:

Միջազգային խումբը բաղկացած է 28 ուսանողից:

Դասախոսները Էստոնիայից, Ֆինլանդիայից, Շվեդիայից, Բելգիայից, ԱՄՆ-ից և Ռուսաստանից են:

2013-2014 թթ. մանրամասն ուսումնական ծրագիրը մատչելի կլինի ESD-ի կայքում (http://www.edk.edu.ee):

Կրթաթոշակ

Կրթաթոշակը ներառում է վերապատրաստման դասընթացին մասնակցությանն առնչվող բոլոր ծախսերն՝ ըստ հետևյալի.

- ուսման վարձ,
- ամսական թոշակ (450 եվրո),
- բնակություն Տալինում՝ բնակարանում սենյակակցի հետ (ներառյալ կոմունալ հարմարությունները և ինտերնետ կապը),

- առողջության ապահովագրում Էստոնիայում՝ ուսանելու ընթացքում,
- Շենգեն վիզայի և Էստոնիայում բնակության թույլտվության ծախսերը:

Կրթաթոշակը չի հոգում դեպի Տալին և Տալինից կատարվող ուղևորությունների ծախսերը:

Մասնակցել կարող են

Կրթաթոշակի համար դիմող անձը պետք է՝
- լինի ՀՀ քաղաքացի,
- (դիմելիս) լինի 35 տարեկանից ոչ մեծ,
- լավ տիրապետի անգլերենին (պահանջվում է, որպեսզի խոսել, գրել-կարդալու հմտությունները լինեն առաջնակարգ),
- ներկայում աշխատի Հայաստանում արտասահմանյան, այդ թվում՝ ԵՄ-ին առնչվող կամ այլ՝ միջազգային ընդգրկումով քաղաքացիական ծառայության կամ միջազգային հարաբերությունների ոլորտում, որտեղ հանդես են եկել պետական կառույցում (պետական համալսարան, հետազոտական ինստիտուտ, գիտական կենտրոնում) և այնտեղ աշխատել են առնվազն մեկ տարի,
- մեծապես շահագրգռված են միջազգային հարաբերություններ և կից առարկաների ուսումնասիրությամբ: Առաջնահերթություն կտրվի այն հավակնորդներին, որոնք էապես շահագրգռված են իրենց մասնագիտական գործունեություն շարունակել միջազգային հարաբերությունների / արտաքին քաղաքականության / դիվանագիտության ոլորտում:
- աշխատասեր են, համագործակցող և պատրաստ միջմշակութային ուսման միջավայրի:

Դիմումի համար անհրաժեշտ փաստաթղթերը

Դիմողը պետք է ներկայացնի՝

- ESD-ի դիմումի ձև (ներբեռնելի www.edk.edu.ee -ում),
- CV անգլերենով,
- նպատակասլացությունն արտահայտող նամակ (300-400 բառ, դիմելու պատճառների բացատրությամբ, նախկին փորձի և այն բանի նշմամբ, թե ուսումը ինչ օգուտ կբերի ուսանողի հետագա զարգացմանը),
- համալսարանական գրության պատճեններ (ոչ պաշտոնական թարգմանությամբ) անգլերենով, այն է՝ բարձրագույն կրթության և ուսումնական բնութագրով,
- (միջազգային) անձնագրի պատճեն,
- 1 անձնագրային չափի լուսանկար (դիմումի ձևին ավելացված),
- ուսումնական շարադրանք (1300-1500 բառ՝ հղումներով)՝ ստորև նշված թեմաներից մեկի շուրջ՝

1. Միջին Արևելքը Արաբական գարունից հետո
2. Արևելյան գործընկերության երկրները 10 տարի անց
3. Արդյոք Չինաստանը զավթելու է Աֆրիկան:

Դիմելու կարգը

Դիմումի փաստաթղթերը կարող են ներկայացվել Online Scholarship Application System-ով կամ ուղարկվել հետևյալ հասցեին՝

Դիվանագիտության էստոնական դպրոց
Թոնիսմագիի փողոց 2
10122, Տալին
Համալսարան

Դիմումը պետք է ԴԷՊ հասնի ամենաուշը մինչև **2013թ. մայիսի 31-ը:** Անհրաժեշտության դեպքում հեռախոսով կամ Skype-ով հարցազրույցներ կանցկացվեն պոտենցիալ հավակնորդների հետ:

Բոլոր հավակնորդներն իրենց ընդունման մասին կծանուցվեն էլեկտրոնային նամակով ամենաուշը 2013-ի հունիսի 7-ին: